«Արցախի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիր» ՓԲԸ մանկավարժական անձնակազմի մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ

1. «Արցախի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիր» ՓԲԸ-ը /այսուհետ՝ Արցախի Շիրակացու ճեմարան/, առաջնորդվելով իր կանոնադրությամբ, ԱՀ աշխատանքային օրենսգրքով, կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ և Կրթական ծրագրով, մանկավարժական անձնակազմի թափուր աշխատատեղերը համալրում է մանկավարժական մրցույթի արդյունքներով։
2. Մանկավարժական մրցույթը հայտարարվում է Արցախի Հանրապետության Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի և «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» ՓԲԸ հետ համատեղ։
3. Մանկավարժական մրցույթի մասնակիցներն են մանկավարժական աշխատանք իրականացնողի դիմորդ-թեկնածուն /այսուհետ՝ Թեկնածու/, մանկավարժական մրցույթը իրականացնող հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/, յուրաքանչյուր դասավանդվող առարկայի կամ ոլորտի գծով գլխավոր մասնագետը /այսուհետ՝ Գլխավոր մասնագետ/
4. Մանկավարժական մրցույթը իրականացնող հանձնաժողովը կազմված է Արցախի Շիրակացու ճեմարանի մանկավարժական առաջնորդությունից և «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի աշխատակազմից՝ ըստ անհրաժեշտության։
5. Գլխավոր մասնագետը դասավանդվող առարկայի կամ ոլորտի գծով փորձառություն ունեցող անկախ մասնագետ է, որը ապահովում է մրցույթի անցկացման հուսալիությունն ու անաչառությունը։
6. Մանկավարժական մրցույթը բաղկացած է չորս փուլերից։ Յուրաքանչյուր հաջորդ փուլին մասնակցում են նախորդ փուլում հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած թեկնածուները։
7. Մանկավարժական մրցույթի առաջին փուլում թեկնածուները ընտրվում են իրենց կողմից ներկայացված ինքնակենսագրականների հիման վրա, հանձնաժողովի կողմից։
8. Մանկավարժական մրցույթի երկրորդ մասնագիտական փուլը՝
   - միտված է ստուգելու թեկնածուի մասնագիտական, այդ թվում առարկայական գիտելիքները։
   - Իրականացվում է որպես կանոն գրավոր հարցաշարի հիման վրա, որը կազմվում է բացառապես գլխավոր մասնագետի կողմից և հիմնված է կրթության պետական չափորոշչի և կրթական ծրագրի պահանջների վրա։
   - Կազմակերպվում է Արցախի Շիրակացու ճեմարանի գործադիր մարմնի կողմից։
9. Մանկավարժական մրցույթի երրորդ գործնական փուլը՝
   - միտված է ստուգելու թեկնածուի մեթոդական հմտությունները,
   - իրականացվում է երկու ենթափուլերով, որոնցից առաջինը թեկնածուի կողմից համապատասխան առարկայի դասի դասալսումներն են Արցախի Շիրակացու ճեմարանի կողմից երաշխավորված մասնագետների մոտ կամ կախված աշխատանքի բնույթից Արցախի Շիրակացու ճեմարանի կողմից երաշխավորված մասնագետների հետ համատեղ աշխատանքի պլանավորումն է։ Երկրորդ փուլը փորձնական դասի կախված աշխատանքի բնույթից գործնական իրավիճակի / խնդրի վերլուծությունն է թեկնածուի կողմից։
   - Ընտրությունը կատարվում է հանձնաժողովի կողմից իրականացված դասալսումների հիման վրա, ընդ որում դասալսման արդյունքները ամփոփվում են Արցախի Շիրակացու ճեմարանի կողմից հաստատված դասալսման թերթիկներով։
10. Մանկավարժական մրցույթի չորրորդ՝ հոգեբանամանկավարժական փուլը՝

- միտված է գնահատելու թեկնածուի ինքնակազմակերպման, արդյունավետ հաղորդակցման, պլանավորման և համագործակցության հմտությունները և աշխատանքի մոտիվացիան։
- Իրականացվում է հանձնաժողովի կողմից նախապես հանձնարարված առաջադրանքի ներկայացման և հարցազրույցի միջոցով։
- Ընտրությունը կատարվում է հանձնաժողովի կողմից։

11. Որպես կանոն՝ մանկավարժական մրցույթի բոլոր փուլերը հաջողությամբ հաղթահարած թեկնածուները հրավիրվում են աշխատանքի Արցախի Շիրակացու ճեմարանում որպես սկսնակ մասնագետ։